

կա ոլորտների օրենսդրորեն սահմանումը, որը բարենպաստ պայմաններ կառաջադրի տնտեսության ռազմավարական ոլորտների զարգացման առումով: Այս կապակցությամբ քայլեր են արվել հարկային օրենսդրության մեջ: Նկատվում է տնտեսության զարգացման տեմպերի խիստ անհամասնություն մարզային կտրվածքով: Սահմանամերձ բնակավայրերի և առավել դանդաղ զարգացող մարզերի տնտեսական աջակցության հարցը օրենսդրական ուժ ստանալու դեպքում կարող է էական ազդեցություն ունենալ ներդրումների ներգրավման հարցում: Առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնել արդյունաբերությանը և հատկապես արտահանման ներուժ ունեցող ճյուղերին:

Երկարաժամկետ ներդրումներին նպաստող գործոն կարող է հանդիսանալ ֆինանսաարդյունաբերական խմբերի ստեղծումը: Ֆինանսաարդյունաբերական խմբերի ստեղծման և այդ ոլորտում համագործակցության առումով ՀՀ և մի շարք երկրների միջև իրավական փաստաթղթեր կան կնքված («ՀՀ և ՌԴ միջև մինչև 2010 թ. երկարաժամկետ համագործակցության մասին պայմանագիր», 29.03.2002 թ., «ՀՀ և ՌԴ միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիր», 05.11.1998 թ., «ՀՀ և Ուկրաինայի միջև 2001-2010 թթ. տնտեսական համագործակցության մասին պայմանագիր», 14.03.2002 թ., «ՀՀ կառավարության և Վրաստանի կառավարության միջև ֆինանսա-արդյունաբերական խմբեր ստեղծելու հիմնական սկզբունքների մասին համաձայնագիր», 18.09.1998թ. և այլն)¹, սակայն բացակայում է տվյալ ոլորտի կարգավորմանն ուղղված օրենսդրությունը: Անհրաժեշտ է ընդունել «Ֆինանսաարդյունաբերական խմբերի մասին» օրենք, որը կկանոնակարգի դրանց ստեղծման, գործունեության հետ կապված իրավահարաբերությունները:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ նույնիսկ, եթե տվյալ կառավարման համակարգը, մեղմ ասած, այնքան էլ չի նպաստում ներդրումային միջավայրի զարգացմանը և բարելավմանը, այդուհանդերձ չի կարելի պնդել, որ ներկայումս օգտագործվում են հնարավոր բոլոր ռեսուրսները: Որոշակի կազմակերպական և օրենսդրական միջոցառումների հետևողական կիրառումը կարող է էական նպաստել երկրում ներդրումային միջավայրի գրավչության բարձրացմանը, ներդրումային պահանջարկի մեծացմանը, ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը, ինչի արդյունքում տեղի կունենա համընդհանուր կենսամակարդակի աճ, որը տնտեսության առաջնային խնդիրն է հանդիսանում:

ԻՐԻՆԱ ՉԱԿՈՔՅԱՆ

*ՀՀ ԳԱՍ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ*

ՎՃԱՐԱՅԻՆ ՉԱՇՎԵԿՇՈՒ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Միջազգային ինտեգրման աստիճանաբար խորացող ընթացքները նոր պահանջներ են ներկայացնում մեր երկրի արտաքին տնտեսական հարաբերությունների կատարելագործման խնդրի հանդեպ: Վերջին տարիներին (կապված մաս 2003 թվականից Առևտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի անդամակցության հետ) ընթացող զարգացումները՝ հատկապես առևտրային և ֆինանսական հոսքերի ազատականացման գործընթացները, թելադրում են ուսումնասիրել արտաքին հատվածի ակնկալվող միտումները և դրանց ազդեցությունը երկրի առևտրային և վճարային հաշվեկշիռների վրա:

¹ Lexpro նորմատիվ իրավական ակտերի տեղեկատու:

Վճարային հաշվեկշիռը ընդգրկում է տվյալ երկրի և այլ երկրների միջև կատարվող բոլոր համախառն գործարքները: Հետևաբար, վճարային հաշվեկշիռը արտացոլում է երկրի վիճակը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում և հանդիսանում է մակրոտնտեսական քաղաքականության կարևոր տարրերից և կանխատեսման գործիքներից մեկը:

Հայաստանի արտաքին ֆինանսական հարաբերությունների վերաբերյալ պատկերացում կարելի է ստանալ՝ վերլուծելով ֆինանսական հոսքերի կազմը:

Աղյուսակ 1

ՀՀ արտաքին ֆինանսական հոսքերը

Մուտք	Ելք
Մասնավոր տրանսֆերտներ	Երկրի արտաքին առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդի սպասարկում
Արտաքին մասնավոր ներդրումներ և վարկեր (բացառությամբ՝ բանկային համակարգի կողմից ստացվող վարկերի)	Երկրի առևտրային բանկերի կողմից ներգրավված և երկրից դուրս փոխանցված վարկային ռեսուրսների գումարների բացասական մնացորդը
Արտասահմանյան երկրներից ստացվող վարկեր և օգնություն	Երկրի արտաքին պարտքի սպասարկումը
Միջազգային կազմակերպություններից ստացվող վարկեր և գրանտներ	Երկրից արտահանվող կապիտալը
Իրական արտաքին զբոսաշրջության հետ կապված եկամուտները	Արտաքին զբոսաշրջությունը Հայաստանից

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ հանրապետության հոսքերի հիմնական մասը կապված է երկրի առևտրային գործարքների և մասնավոր տրանսֆերտների գումարների հետ:

ՀՀ վճարային հաշվեկշռի վերաբերյալ պատկերացում կարելի է ստանալ՝ վերլուծելով աղյուսակ 2-ի տվյալները:

Աղյուսակ 2

ՀՀ վճարային հաշվեկշռի հիմնական ցուցանիշները 2004-2006թթ.¹

Ցուցանիշներ	2004	2005	2006	2007
I Ընթացիկ հաշիվ	-19.63	-51.7	-117.1	-589.3
1. Ապրանքներ՝	-457.9	-587.9	-895.8	-1600.3
արտահանում	722.9	973.9	992.0	1162.6
ներմուծում	-1173.1	-1556.1	-1883.7	-2756.0
2. Ծառայություններ	-98.9	-120.0	-130.4	-212.5
3. Եկամուտներ	107.4	132.5	215.2	278.8
4. Ընթացիկ անհատույց փոխանցումներ	429.8	523.7	694.0	944.8
II Կապիտալի և ֆինանսական հաշիվ	25.2	47.9	132.9	591.5
1. Կապիտալի հաշիվ	41.3	73.3	86.4	142.8
2. Ֆինանսական հաշիվ	-16.1	-25.3	46.5	448.7

Աղյուսակի վերլուծությունը ցույց է տալիս, որ ընթացիկ հաշվի հիմնական բացասական արդյունք ստեղծող հոդվածը հանրապետություն ներմուծվող ապրանքների մեծ (արտահանման համեմատ) ծավալներն են:

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., 2007, էջ 460-469:

Այսպիսով, վճարային հաշվեկշռի գերակշռող մասը ապրանքների և ծառայությունների հետ կապված դրամական հոսքերն են, որոնք սերտորեն կապված են երկրի առևտրային հաշվեկշռի հետ: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ հանրապետությունում անկախության տարիներին ձևավորվեց ազատականացված արտաքին առևտրային ռեժիմ (որը գործում էր մասնինչև ԱՀԿ-ին երկրի անդամակցումը): Այդ ռեժիմը բնութագրվում է ներմուծման ժամանակ կիրառվող սակագնային ազատական տարիֆային լիբերալ համակարգով, չհարկվող արտահանմամբ և առևտրի քանակական սահմանափակումների բացակայությամբ:

Հայաստանում վերջին տարիներին խորանում է արտահանման նկատմամբ ներմուծման առաջանցիկ աճը, ինչը, բնականաբար, բացասաբար է անդրադառնում առևտրային հաշվեկշռի և վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի վրա: Այսպես, եթե 2005թ.՝ նախորդ տարվա համեմատ, ընթացիկ հաշվի պակասուրդը կրճատման միտում ուներ՝ ինչպես բացարձակ արժեքով, այնպես էլ ՀՆԱ-ի կառուցվածքում (153.2 մլն. ԱՄՆ դոլար և 3.2% ՀՆԱ-ի նկատմամբ՝ նախորդ տարվա 161.6 մլն. ԱՄՆ դոլարի և 4.5% ՀՆԱ-ի նկատմամբ տվյալների համեմատ), ապա հետագա տարիներին բացասական գործոնների ազդեցության արդյունքում նշված միտումը փոփոխվեց: 2005թ. համար հատկանշական էր նախորդ տարիների համեմատ ապրանքների արտահանման և ներմուծման աճի տեմպերի զգալի արագացումը, ինչպես նաև ծառայությունների հաշվեկշռի պակասուրդի նշանակալի կրճատումը: Ընդ որում, ապրանքների արտահանման բարձր տեմպերին նպաստեցին գումավոր մետաղների միջազգային բարձր գները, որի հետևանքով նշված ապրանքախմբի արտահանման զգալի աճ գրանցվեց: Ինչ վերաբերում է ներմուծման աճին, ապա դրա բարձր տեմպերը պայմանավորված էին, մի կողմից, նախորդ տարիների համեմատ սպառողական ապրանքների նկատմամբ պահանջարկի շարունակական աճով, մյուս կողմից, որոշ ձեռնարկությունների ներդրումային ծրագրերի շրջանակներում համապատասխան ապրանքատեսակների ներկրմամբ:

Ինչպես նշվեց, 2006 և 2007 թվականներին առևտրային հաշվեկշռի վիճակի զգալի վատթարացում տեղի ունեցավ: Չնայած նրան, որ այդ տարիներին շարունակվեց գումավոր մետաղների միջազգային գների աճը, տեղի ունեցավ առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդի աճ: Վիճակագրական տվյալների վերլուծությունը վկայում է, որ 2007թ. 2003թ. համեմատ արտահանում-ներմուծում բացասական հաշվեմնացորդը աճել է 276.3 մլն. ԱՄՆ դոլարով (2003թ.՝ 358,4 մլն. դոլ., 2007թ.՝ 634.7 մլն. դոլար): Նշված միտումը շարունակվեց 2008թ. ընթացքում, նախորդ համապատասխան ժամանակահատվածի համեմատ 2008թ. արտահանումը կրճատվել է մոտ 5.0 տոկոսով, իսկ ներմուծումը աճել է 41.0 տոկոսով: Արդյունքում՝ 2008թ. առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը կազմել 3.3 մլրդ. ԱՄՆ դոլար:

Արդի սոցիալ-տնտեսական զարգացման օրինաչափությունների վերլուծությունները թույլ են տալիս ենթադրել, որ մոտ ապագայում արտահանման նկատմամբ ներմուծման առաջանցիկ աճի միտումը կպահպանվի, քանի որ դեռևս ստեղծված չեն լուրջ հիմքեր արտահանման համար մրցունակ ապրանքատեսակների արտադրության ծավալման համար, իսկ ներմուծման ընդլայնման միտումը կարող է պահպանվել: Նշված կանխատեսումը հիմնված է հետևյալ փաստարկների և օրինաչափությունների վերլուծման վրա:

- ա) ներդրումային մի շարք ծրագրերում նախատեսված է մեքենաների, սարքավորումների ներմուծման մեծ ծավալներ,
- բ) հավանական է էներգակիրների միջազգային գների բարձրացում,
- գ) սպասվում է բնակչության աճող եկամուտների համապատասխան պահանջարկի աճ մի շարք ներմուծվող ապրանքախմբերի գծով (օրինակ, երկարատև օգտագործման ապրանքներ, համակարգչային տեխնիկա և այլն):
- դ) դեռևս բավարար հիմքեր ստեղծված չեն ներմուծումը փոխարինող որոշ ճյուղերի և տեղական արտադրանքների ձևավորման և զարգացման ուղղությամբ:

Ինչ վերաբերում է արտահանմանը, ապա, ինչպես նշվեց, մոտակա 2-3 տարիների ընթացքում դժվար է ակնկալել այդ ուղղությամբ զգալի բարելավում: Որոշ չափով արտահանման աճ կարող է պայմանավորված լինել գումավոր մետաղների միջազգային գների բարձրացմամբ: Մակայն ֆինանսական ճգնաժամի հնարավոր հետևանքներից մեկը՝ դա բնական ռեսուրսների, մետաղների, սարքավորումների նկատմամբ պահանջարկի կրճատումն ու գների իջեցումն է, ինչը բացասական ազդեցություն կունենա հանրապետությունից արտահանվող մետաղների ծավալների և ստացված հասույթի վրա: Մյուս կողմից, սարքավորումների գների սպասվող իջեցումը դրականորեն կարող է անդրադառնալ դրանց ներմուծման ընդլայնման վրա, ինչը շահավետ պայմաններ կստեղծի արտադրական ձեռնարկությունների տեխնիկական վերազինման համար: Միաժամանակ, դրամի ամրապնդման շարունակվող միտումը հետագայում նույնպես կարող է բացասական ազդեցություն թողնել պատրաստի արտադրանքի արտահանման վրա, ավելացնելով առևտրային և վճարային հաշվեկշիռների պակասուրդը:

Հաշվի առնելով առևտրային հաշվեկշռի բարելավման խնդրի կարևորությունը, ինչպես նաև նկատի ունենալով վերջին տարվա ընթացքում սննդամթերքների միջազգային գների զգալի աճը՝ հանրապետությունում շեշտը պետք է դրվի, մի կողմից, ներմուծմանը փոխարինող տեղական ապրանքների արտադրության ծավալման, մյուս կողմից, արտահանմանը միտված ճյուղերի և ձեռնարկությունների զարգացման ներուժի արդյունավետ օգտագործման, միջազգային և ներքին շուկաներում մրցունակ արտադրանքի ընդլայնման վրա:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում կան 7 հիմնական ճյուղեր, որոնք ունեն արտահանման ներուժ (ոսկերչական արտադրանք, էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, թեթև ու սննդի արդյունաբերություն, համակարգչային ծրագրեր, քիմիա): Մակայն առկա ներուժի օգտագործման խնդիրը չի կարող լուծվել առանց առաջատար տեխնոլոգիաների, ինովացիոն ուղղվածություն ունեցող ներդրումների, որոնց դեպքում միայն հնարավոր է ապահովել արտաքին և ներքին շուկաներում մրցունակ արտադրանքի առաջարկ:

Անհրաժեշտ են խթանման այնպիսի մեխանիզմներ, որոնք բարենպաստ պայմաններ կապահովեն տեղական արտադրողներին: Այդ պայմանները ընդգրկում են ինչպես հարկամաքսային համակարգի բարելավումը, այնպես էլ ֆինանսական, հատկապես արժեթղթերի շուկայի զարգացումը, բանկային և ապահովագրական գործունեությունը խթանող այնպիսի միջոցառումների ներդրումը, որոնք կապահովեն երկարաժամկետ ֆինանսական ռեսուրսների ներգրավումը:

Վերջին տարիներին հանրապետությունում նկատվում է նաև օտարերկրյա ներդրումների աճ, օրինակ, 2007թ. նախորդ տարվա համեմատ այդ ներդրումներն աճել են 73.7 տոկոսով, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումները 43.3 տոկոսով: Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը աճել է նաև նախորդ տարիների համեմատ մասնավոր տրանսֆերտների, արտասահմանից ստացված օգնության և դրամաշնորհների աճի տեմպերի նվազման հետևանքով: Ընթացիկ հաշվի մուտքերի կազմում առավել բարձր տեսակարար կշիռ ունեն մասնավոր տրանսֆերտները, որոնք կազմում են ընդհանուր մուտքերի մոտ 60%-ը: Դրանք հանրապետություն են մտնում ինչպես բանկային փոխանցումների միջոցով, այնպես էլ այլ ճանապարհներով: Կենտրոնական բանկի տվյալների համաձայն՝ մասնավոր տրանսֆերտների գումարները տարեցտարի ավելանում են: Այսպես, պաշտոնական տվյալների համաձայն, մասնավոր տրանսֆերտները կազմել են. 2005թ.՝ 940 մլն. ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 19%-ը, 2006թ.՝ 1.2 մլրդ. ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 18.5%-ը, 2007թ.՝ 1.32 մլրդ. ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 14%-ը: Իրականում, Ազգային և ռազմավարական հետազոտությունների կենտրոնի հաշվարկներով, նշված տվյալները նվազեցված են: Կենտրոնի տվյալների համաձայն՝ 6 տարվա ընթացքում (2000-2005թթ.) տրանսֆերտների գումարը հասել է 5 մլրդ. ԱՄՆ դոլարի, այդ թվում 2000թ.՝ 900 մլն. ԱՄՆ դոլար,

2001թ.՝ 500 մլն. ԱՄՆ դոլ, 2002թ.՝ 700 մլն. ԱՄՆ դոլար, 2003թ.՝ 900 մլն ԱՄՆ դոլար, 2004թ.՝ 1.1 մլրդ ԱՄՆ դոլար, 2005թ. 1.3 մլրդ ԱՄՆ դոլար¹:

Հարկ է նշել, որ մասնավոր տրանսֆերտների մասն մեծ մուտքը դրական ազդեցություն ունի երկրի տնտեսական զարգացման վրա, քանի որ զգալիորեն բարձրացնում է բնակչության վճարունակ պահանջարկը, ինչն, իր հերթին, խթան է հանդիսանում արտադրության, շինարարության և ծառայությունների ոլորտների զարգացման համար: Միաժամանակ, այդ մուտքերի աճը հանգեցնում է դրամի ամրապնդմանը և արտադրության (հիմնականում դոլարի) համապատասխան թուլացմանը, ինչն ունի նաև բացասական հետևանքներ:

Խոշոր ֆինանսական հոսքեր են՝ ձևավորում արտաքին մասնավոր ներդրումները և վարկերը (բացառությամբ պետական ոլորտի և բանկային համակարգի կողմից ստացված վարկերի): 2007թ. օտարերկրյա ներդրումները կազմել են 698.8 մլն ԱՄՆ դոլար, այսինքն ավելացել են նախորդ տարվա համեմատ 245.6 մլն ԱՄՆ դոլար գումարով:

Ելքային մասում առավել մեծ տեսակարար կշիռ ունի առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը՝ սպասարկող արտադրության գումարը (2007թ.՝ մոտ 50%) և ներգրավված ու երկրից դուրս փոխանցված վարկային ռեսուրսների տարբերության բացասական մնացորդը:

Վճարային հաշվեկշիռը (հաշվարկային հաշվեկշռի մասով) տեղեկատվություն է պարունակում նաև արտաքին պարտքի կուտակման, հիմնական պարտքի գումարի տոկոսների և մայր գումարի մարման մասին: Արտաքին պարտքի սպասարկման հետ կապված ծախսերը հանրապետությունում կազմում են բավական մեծ գումարներ: Պետական արտաքին պարտքը 2007թ. կազմել է ՀՆԱ-ի մոտ 17%-ը և բյուջեի եկամուտների 85%-ը, ինչը ապագայում լուրջ խնդիրներ է առաջացնելու՝ երկրի միջազգային ֆինանսական հարաբերությունների և տնտեսական զարգացման տեսակետից:

Ընդհանուր առմամբ, վերլուծությունը բացահայտում է, որ հանրապետություն մուտք գործող արտադրության գումարը գերազանցում է երկրից արտահանվող գումարներին: Սակայն նշված հաշվարկների հիմքում դրված են պաշտոնական տվյալները: Իրականում, նշված հաշվարկներում չեն ընդգրկված մի կողմից, մասնավոր տրանսֆերտների ոչ պաշտոնական մուտքերը, մյուս կողմից՝ այն գումարները, որոնք ոչ պաշտոնական ձևերով դուրս են բերվում հանրապետությունից (այդ թվում՝ առևտրային բանկերի վարկային ռեսուրսները): Այսինքն, կարելի է ենթադրել, որ իրականում երկրից դուրս բերվող գումարները գերազանցում են մուտք գործող գումարներին:

Վճարային հաշվեկշիռը սերտորեն կապված է նաև երկրի արժույթային շուկայի հետ: Այն դեպքում, երբ երկիրը ծախսում է ավելի շատ գումարներ, քան ստանում է, ազգային արժույթի փոխարժեքը նվազում է և հակառակը:

ՀՀ-ում վերջին տասնամյակի ընթացքում նկատվում է դրամի աստիճանաբար ամրապնդում, որի պատճառը, մի կողմից, միջազգային ֆինանսական շուկաներում ԱՄՆ դոլարի արժեզրկման միտումն է, մյուս կողմից՝ ազգային շուկա արժեզրկված դոլարների մուտքի մեծ ծավալներն են: Վերջինս հիմնականում պայմանավորված է մասնավոր տրանսֆերտների՝ դեպի հանրապետություն տարեցտարի ավելացող մուտքով: Նման պայմաններում Հայաստանի Կենտրոնական բանկից ակնկալվում է ավելի ճկուն դրամավարկային քաղաքականություն, որը կխոչընդոտի դրամի մասն ամրապնդմանը: Միաժամանակ, դոլարի արժեզրկումն ունի նաև դրական ազդեցություն վճարային հաշվեկշռի վրա, քանի որ կրճատում է դոլարային արտահայտությամբ պակասուրդի գումարը:

Ցանկացած երկիր շուկայական հարաբերությունների զարգացման ընթացքում անխուսափելիորեն հայտնվում է արտաքին և ներքին հավասարակշռության ապահովման խնդրի առջև: Արտաքին հավասարակշռությունը նշանակում է արտաքին հաշվարկների հաշվեկշռում՝

¹ Деловой экспресс, N47(704), 2007, стр. 1-3.

արտարժութային փոխարժեքների կայուն մակարդակի պահպանման նպատակով: Ներքին հավասարակշռությունը ենթադրում է համախառն պահանջարկի այն մակարդակի սահմանումը, որը համապատասխանում է լրիվ զբաղվածությանը: Որպես կանոն, տվյալ երկրի համար միաժամանակ ներքին և արտաքին հավասարակշռության սահմանումը բարդ խնդիր է: Հաճախ, երբ պետությունը ապահովում է արտաքին հավասարակշռությունը, հսկողությունից դուրս են մնում գործազրկության և գնաճի ներքին խնդիրները: Մյուս կողմից, ֆիսկալ և դրամավարկային քաղաքականության օգնությամբ ներքին պահանջարկի պետական կարգավորումը կարող է հանգեցնել վճարային հաշվեկշռի հավասարակշռվածության խախտմանը, ինչը բացասաբար է ազդում արտարժութային փոխարժեքի վրա:

Հետևաբար, վճարային հաշվեկշռի կայունացման նպատակով պետությունը պետք է օգտագործի ճկուն դրամավարկային լծակներ, իսկ ներքին համախառն պահանջարկի կարգավորման համար՝ հարկաբյուջետային քաղաքականությունը: Հիմնականում դա վերաբերվում է հաստատագրված արժութային փոխարժեքի համակարգին: Այլ մոտեցում պետք է ցուցաբերվի լողացող փոխարժեքի կիրառման դեպքում, որը գործում է Հայաստանում:

Նշենք, որ ազատ լողացող փոխարժեքի քաղաքականություն իրականացնելիս փոխարժեքի տատանումները դիտարկվում են որպես վճարային հաշվեկշիռը կարգավորող կարևոր միջոց: Բացի այդ, տարբեր երկրների միջև իրականացվող փոխանակությունների վերլուծության միջոցով կարելի է դատել լողացող արժութային փոխարժեքների համակարգի կայունության մասին:

Ազատ լողացող փոխարժեքի դեպքում երկիրը պետք է կարգավորի արտաքին հավասարակշռությունը ճկուն արտարժութային փոխարժեքի կիրառման միջոցով: Այն դեպքերում, երբ պետությունը ավելացնում է դրամի առաջարկը, դա հանգեցնում է ծախսերի աճին և ազգային դրամի համեմատական արժեզրկմանը, ինչն, իր հերթին, պայմաններ է ստեղծում միջազգային շուկայում տեղական արտադրանքի մրցունակության բարձրացման, հետևաբար, առևտրային հաշվեկշռի բարելավման համար: Այսինքն, համախառն առաջարկի աճը, որը պայմանավորված է արտարժույթի արժեզրկման հետ, նպաստում է երկրի տնտեսական զարգացմանը, հետևաբար այն դրական գործոն կարելի է համարել ազգային եկամտի աճի տեսանկյունից: Սակայն այդ քաղաքականությունը ժամանակավոր բնույթ ունի, քանի որ բացասական հետևանքներ կարող է ունենալ երկրի ֆինանսական համակարգի վրա, առաջացնելով գնաճի ուժեղացում:

Մյուս կողմից, պետությունը պարտադրված է օգտագործել հարկաբյուջետային քաղաքականությունը ներքին հավասարակշռվածության պահպանման համար: Ավելացնելով պետական ծախսերը և/կամ նվազեցնելով հարկերի մակարդակը, պետությունը խթաններ է ստեղծում համախառն պահանջարկի ավելացման համար: Սակայն, արդյունքում, կարող է տեղի ունենալ առևտրային հաշվեկշռի վատթարացում և ազգային արժույթի թուլացում: Միաժամանակ, դա կարող է առաջացնել տոկոսադրույքի աճի և արտասահմանյան կապիտալի ներհոսքի ավելացում, ինչը որոշ չափով և որոշ ժամանակով արժեքավորում է ազգային արժույթը:

Այսպիսով, վճարային հաշվեկշիռը բնորոշում է երկրի ֆինանսական վիճակը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում և հանդես է գալիս որպես մակրոտնտեսական քաղաքականության մշակման կարևոր կողմնորոշիչ, ինչպես նաև մակրոտնտեսական վերլուծության և կանխատեսման կարևոր գործիք: